ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ» ԹԵՄԱՅՈՎ

10.08.2020 17:32

Հարգելի՛ փաստաբաններ,

12.08.2020թ. ժամը 16:00-18:00-ը ՀՀ փաստաբանների պալատը «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (ԷԿԵՆԳ) հետ համատեղ կազմակերպելու է հեռավար դասընթաց ***«Էլեկտրոնային կառավարության գործիքները: Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ»*** թեմայով:

- Դասընթացը կվարեն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի մասնագետները:

- Դասընթացին կարող եք միանալ Ձեր գտնվելու վայրից:

- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 12.08.2020թ. ժամը 12:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով ani.gharibyan@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը:

- Դասընթացին նախապես գրանցված փաստաբանների էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկվի հրավեր, որն ակտիվացնելով կմիանաք դասընթացի հարթակին:

- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Տեղեկացնում ենք նաև, որ դասընթացի հրավերը կստանաք «Zoom» հարթակից, որին միաժամանակ կարող է միանալ մինչև 100 մասնակից, ուստի գրանցման առաջնահերթությունը տրվելու է առավել վաղ գրանցված 100 փաստաբանի:

Հետևապես, խնդրում ենք գրանցվել միայն այն դեպքում, եթե համոզված եք, որ դասընթացին մասնակցելու եք:

Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ նախորդիվ գրանցված մի շարք փաստաբաններ մուտք չեն գործել համակարգ, որի հետևանքով ավելի ուշ գրանցման հայտ ներկայացրած փաստաբանները հրավեր չեն ստացել և չեն կարողացել մուտք գործել համակարգ, ուստի բոլոր հայտ ներկայացրած փաստաբաններին համակարգ մուտք գործելու հրավերը կուղարկվի և նախատեսված ժամին համակարգ մուտք գործած 100 փաստաբանները հնարավորություն կունենան մասնակցելու դասընթացին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })